

ՄԱՐԻՆԵ ԲՈԳՂԱՆՅԱՆ

ՉԵՎԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Ձևական քերականությունը որպես գիտական ուղղություն սկզբնավորվել և իր զարգացումն է ունեցել Ֆ. Ֆորտունատովի գլխավորած Մոսկվայի լեզվաբանական դպրոցում: Ավելի ուշ այն տարածվել է տարբեր երկրներում առաջին հերթին հենց Ֆ. Ֆորտունատովի աշակերտների ջանքերով: Ֆ. Ֆորտունատովի սաներից է եղել նաև հայ լեզվաբան Լ. Մսերյանցը, որը սակայն չի տարվել Ֆորտունատովի ձևի ուսմունքով, այլ լինելով հնդեվրոպաբան և ուսումնասիրելով հնդեվրոպական լեզուների ձևաբանությունը՝ պարզապես թռուցիկ անդրադարձ է կատարել բառի ձևի խնդրին: Իր «Հնդեվրոպական լեզուների համեմատական ձևաբանության» մեջ, խոսելով բառի ձևի գիտական վերլուծության մասին՝ Լ. Մսերյանցը նշում է, որ բառի ձևը կազմված է հիմքից և այս կամ այն թեքության ձևանցից: Ընդ որում, հիմքն ինքը կամ ներկայացնում է «հիմք-արմատը»՝ այսինքն՝ մաքուր արմատը, կամ էլ մեծ մասամբ հանդես է գալիս որպես մեկ կամ մի քանի հիմքակազմ վերջածանցներով ծավալված արմատ¹: Այսպիսով, հնդեվրոպական բառի ձևի վերլուծության համար հարկավոր է տարբերել՝ 1) արմատ, 2) բառակազմական վերջածանցներ և 3) թեքական վերջածանցներ (այսինքն՝ որևէ հոլովիչ կամ խոնարհիչ վերջավորություն)²: Ընդ որում, արմատը հանդես է գալիս որպես բառի հայտնի ձևի ընդհանուր կամ հիմնական նշանակության կրողը³:

Եթե Մսերյանցի ուսումնասիրության առարկան ընդհանուր հնդեվրոպական լեզուն էր, ինչպես և Ֆորտունատովինը, ապա Մ. Աբեդյանը այս հարցում հետևում է Պեշկովսկուն, որը զբաղվել է հենց ժամանակակից լեզվի /ուսերենի/ քերականությամբ:

Հարկ է նշել, որ ձևական քերականության հայկական դպրոցը սերտորեն կապված է Մ. Աբեդյանի անվան հետ: Ձևական քերականության

¹ Л. Мсерианд, Сравнительная морфология индоевропейских языков, Варшава, 1913., с. 22

² Նույն տեղում, էջ 22

³ Նույն տեղում, էջ 22:

ազդեցության հետքեր ենք հայտնաբերում Աբեղյանի այն ուսումնասիրություններում, որոնք վերաբերում են աշխարհաբարի քերականությանը: Մի կողմ թողնելով այն հարցը, թե որքանով է Աբեղյանն ինքը ընդունում իր ձևապաշտական հայացքները, նշենք, որ դրանք պայմանավորված են նրա ընդհանուր լեզվաբանական հայացքներով: Աբեղյանի ընդհանուր լեզվաբանական հայացքներում կարելի է տեսնել երիտքերականական դպրոցի և հատկապես Մոսկվայի դպրոցի տեսաբան Ֆորտունատովի ազդեցությունը, որը փորձում էր համադրել երիտքերականական դպրոցներին հատուկ պսիխոլոգիզմն ու իրեն հատուկ ֆորմալիզմը:

Որպեսզի պարզ դառնա, թե որքանով է Աբեղյանի քերականությունը կրում ձևական քերականության ազդեցությունը, հարկավոր է նախ նշել ձևական քերականության հիմնական սկզբունքներն ու պարզել, ինչպիսի ճյուղավորումներ նա ունեն:

Առաջին հերթին հարկ է նշել, որ ձևական քերականության հիմքում ընկած էին լեզվական վերլուծության ձևաքերականական սկզբունքները, որոնցով էլ դասակարգվում էին խոսքի մասերը: Բառերի իմաստային առանձնահատկությունները ստորադասվում էին նրա ձևական հատկանիշներին, օրինակ՝ գոյականները բնորոշվում էին բառափոխական ձևերով, այսինքն՝ հոլովմամբ:

Խոսքի մասերի դասակարգումը կախված բառափոփոխման ձևերից, ստացել է ֆորմալ քերականություն անվանումը: Ուշագրավ է, որ նույնիսկ Ռուսաստանում ձևական քերականությունը, որպես լեզվաբանական ուղղություն, միասնական չի եղել և ունեցել է իր տարբեր ճյուղավորումները: Բանն այն է, որ եթե Ֆորտունատովը փորձում էր համադրել երիտքերականական պսիխոլոգիզմն ու իրեն հատուկ ֆորմալիզմը, ապա նրա աշակերտներից ոմանք, ինչպես օրինակ Մ. Ն. Պետերսոնը և Ս. Ի. Աբակուսովը, ծայրահեղության էին հասնում քերականության մեջ բառի հնչյունական կողմի ունեցած դերի գերազնահատման գործում: Այս հոսանքը լեզվաբանության պատմության մեջ հայտնի է ուլտրաֆորմալիզմ անվանումով:

Ֆորտունատովի մեկ այլ աշակերտը՝ Ա. Պեշկովսկին, որը նախապես հիմնականում անքննադատաբար ընդունում էր իր ուսուցչի դրույթները, ավելի ուշ փորձեց վերացնել ֆորմալիզմի որոշ ծայրահեղություններ: Ի տարբերություն Ֆորտունատովյան դպրոցի մյուս ներկայացուցիչների, օրինակ Դ. Ն. Ուշակովի, Մ. Ն. Պետերսոնի, Ս. Ի. Աբակուսովի, որոնք խոսքի մասերի դասակարգման համար հիմք են ընդունում միայն ձևաբանական սկզբունքը, Պեշկովսկու «Ռուսերենի շարահյուսություն» աշխատության նույնիսկ առաջին հրատարակության մեջ այս սկզբունքը զուգակցվում է Պոտեբնյայի

իմաստաշարահյուսական չափանիշների հետ⁴։ Արդեն երրորդ հրատարակության մեջ, որը լույս է տեսել 1928թ., նա խիստ քննադատության է ենթարկում բառերի դասակարգումը՝ ըստ խոնարհման և հոլովական վերջավորությունների⁵։ Պեշկովսկին այսպիսով նախապես տարբերակում է 7 խոսքի մաս՝ բայ, գոյական, ածական, դերածական, մակբայ, դերմակբայ և անորոշ դերբայ /1914/, իսկ այնուհետև տարբերակում է միայն 4 խոսքի մաս /1928/՝ բայ, գոյական, ածական, մակբայ։ Այս փոփոխությունը Ա.Բելովը փորձում է բացատրել նրա տեսական հայացքների զարգացմամբ՝ Ֆորտունատովի ձևա-ձևաբանական սկզբունքների մեթոմամբ և Պոտեբնյայի ու Շախմատովի շարահյուսական տեսակետի խոր զարգացմամբ, քերականական հետազոտությունների նոր մեթոդաբանությամբ, որը ելնում է բառի քերականական ձևի և իմաստի միասնությունից⁶։ Այսպես, արդեն երրորդ հրատարակության մեջ Պեշկովսկին անորոշ դերբայը չի համարում առանձին խոսքի մաս, այլ այն դիտարկում է որպես բայի հիմնական ձևերից մեկը։ Ինչ վերաբերում է բայածականին և դերմակբային, ապա նրանք դասվում են այսպես կոչված խառը կարգերի թվին⁷։

Վերադառնալով Աբեդյանին, նշենք, որ նա, իհարկե, հեռու էր ուլտրաֆորմալիզմից, բայց և այնպես զերծ չէր Ֆորտունատովի ազդեցությունից։

Այսպիսով, հարելով երիտքերականական պոսիտիվիզմին Աբեդյանը մարդկանց բոլոր պատկերացումները արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների և հենց իրենց հոգեկան վիճակների մասին բաժանում է երկու մեծ խմբի՝ առանց որոնց մարդիկ չեն կարող մտածել։ Այդ պատկերացումների մի մասը ներկայանում է իբրև ինքնակա, անկախ գոյություն ունեցող առարկաներ, մյուս մասը՝ իբրև ոչ ինքնակա հատկանիշներ՝ հատկություն, գործողություն, դրություն և այլն⁸։ Առաջին խումբն իր մեջ ներառում է գոյականները, երկրորդը՝ ածականներն ու բայերը։ Չարկ է նշել, որ նա նույնացնում է խոսքի մասերն ու նախադասության անդամները և դրանց սահմանման համար հիմք ընդունում խոսք կազմելու ունակությունը։ Ըստ այդմ, նա խոսքի մաս է համարում բայն ու այսպես կոչված լրացական բառերը։ Բայը նույնացնելով ստորոգյալի հետ՝ Աբեդյանը ընդունում է միայն դիմավոր ձևերը, իսկ դերբայները բաշխում

⁴ А. И. Белов, Пешковский как лингвист и методист, М., 1958, с. 176.

⁵ А. И. Белов, ух. соч., с. 177.

⁶ А. И. Белов, ух. соч., с. 188.

⁷ А. И. Белов, ух. соч., с. 188.

⁸ У. Աբեդյան, Երկեր, հ. 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 25-26:

ածականի զանազան խմբերի մեջ⁹, անորոշ դերբայն էլ համարելով գոյական¹⁰:

Այսպես, ըստ նրա, բայերը ցույց են տալիս ստորոգում, այն է՝ խոսողը գիտակցում է հոգեբանական ենթակայի (բայի դեմքի) և հոգեբանական ստորոգյալի (բայիմաստի) հարաբերությունը¹¹:

Լրացական բառերը այն բառերն են, որոնք պարզում, որոշում են բայի նշանակած գաղափարները¹²: Լրացական բառերը, ըստ նրա, գոյականը, ածականն ու մակբայն են: Լրացական բառերի այս երեք տեսակները իրենց հերթին ըստ իրենց նշանակության բաժանվում են երկու երկրորդական տեսակների՝ անուն և դերանուն: Ի տարբերություն անունների, որոնք ունեն ամփոփոխ, հաստատուն նշանակություն, դերանունները չունեն հաստատուն նշանակություն, այլ ամեն անգամ նայելով թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անուն են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են¹³:

Եթե փորձենք զուգահեռ տանել ռուս ձևական քերականության դպրոցի հետ, ապա կտեսնենք, որ այստեղ նույնպես ակնհայտ է Ֆորտունատովի ազդեցությունը: Դասակարգելով բառերը որպես լրիվ և մասնակի՝ Ֆ. Ֆորտունատովը լրիվ բառերն էլ իրենց հերթին բաժանում է բառանվանումների և դերանվանական բառերի: Վերջիններս նշանակում են կամ իրերն ու առարկաները տվյալ խոսքի հարաբերությամբ, կամ մտքի տվյալ առարկաների հարաբերությունը տվյալ խոսքի հանդեպ¹⁴, ինչպես օրինակ, հայերենի համար կլինի այս գիտո՞ր:

Ֆորտունատովի մասնակի տերմինին համապատասխանում է Արեղյանի խոսքի մասնիկներ գիտաբառը, որոնք երկուսն էլ նշանակում են կապակցական բառերը կապերն ու շաղկապները:

Ինչ վերաբերում է գոյականին, ապա Արեղյանը այն սահմանում է հետևյալ կերպ. «Այն բոլոր բառերը, որոնք առարկա են նշանակում, - լինի ինքնակա առարկա, թե իբրև այնպիսին մտածված մի վերացություն (աբստրակցիա, աբստրակտում), իրենց նշանակությամբ կազմում են մի ընդհանուր խումբ - ԳՈՅԱԿԱՆ»¹⁵:

Թեև սահմանման մեջ բառափոխական ձևերի կարևորության մասին Արեղյանը չի հիշատակում, սակայն, կարծում ենք, որ դրանք նրա դասակարգման հիմքն են կազմում, քանի որ անունների ենթատեսակների

⁹ Հմմտ. է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 151:

¹⁰ Մ. Արեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 541:

¹¹ Մ. Արեղյան, Երկեր, հ. 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 28:

¹² Նույն տեղում, էջ 297:

¹³ Նույն տեղում, էջ 297:

¹⁴ Фортунатов Ф. Ф., Избранные труды, т. 1, М., 1956, с. 135.

¹⁵ Մ. Արեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 545:

հիմքում ընկած է հենց հոլովվելու ունակությունը: Այսպես, անուններն իրենց հերթին կարող են ունենալ հետևյալ ենթատեսակները. 1. անուն նեղ մտքով, այսինքն՝ հասարակ և հատուկ գոյականները, 2. թվական գոյական, 3. անորոշ դերբայ, 4. դերանուն¹⁶:

Ինչպես տեսնում ենք, անորոշ դերբայը նա նույնպես գոյական է համարում, քանի որ կարծում է, որ խնդրառությունը և բայիմաստը բավարար չեն այն բայ համարելու¹⁷: Բացի այդ, անորոշ դերբայը հոլովվում է, հոդ է ընդունում, նախադասության մեջ հանդես է գալիս որպես ենթակա, ստորոգյալ կամ լրացում¹⁸: Հայտնի է, որ ռուս ֆորմալիստները, ինչպես օրինակ՝ Ֆ. Ֆորտունատովը, Ա. Պեշկովսկին և այլք, անորոշ դերբայը համարում էին առանձին խոսքի մաս¹⁹: Ինչպես վերը նշվեց, Պեշկովսկին հետագայում փոխում է իր նախնական կարծիքը և այն դիտում որպես բայի ձևերից մեկը: Անդրադառնալով Պեշկովսկու այս կարծիքին Աբեղյանը փորձում է հիմնավորել իր տեսակետը՝ նշելով հայերենի անորոշ դերբայի և ռուսերենի ինֆինիտիվի տարբերությունները: Այսպես, հայերենի անորոշ դերբայը համեմատելով ռուսերենի ինֆինիտիվի հետ՝ նա նշում է հայերենում անորոշ դերբայի հոլովման, նրա հետ տարբեր տեսակի հոդերի, նախադրությունների և ետադրությունների և ստացական իմաստով որոշողների գործածության մասին²⁰: Այսինքն՝ այստեղ էլ կարևորվում են նրա բառափոխական հատկանիշները:

Ինչ վերաբերում է թվականին, ապա ռուս ֆորմալիստները թվականը դասում են ածականների շարքում: Հիշատակելով իհարկե նաև թվական գոյականի մասին՝ Աբեղյանը նույնպես այդպես է վարվում այն պատճառաբանությամբ, որ քանակը նույնպես հատկանիշ է և քանակ ցույց տվող բառերը պետք է համարվեն ածական²¹: Իհարկե, Աբեղյանը ելնում է այստեղ գուտ իմաստից և ոչ ձևից, որի մասին ինքն էլ նշում է²²: Այսպիսով, ըստ նրա, ածականները լինում են անուն ածական կամ ածական անուն, թվական ածական, դերբայ ածական կամ բայածական և դերանուն ածական կամ ածական դերանուն²³:

¹⁶ Նույն տեղում, էջ 297:

¹⁷ Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 538:

¹⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 538:

¹⁹ Фортунатов Ф. Ф., Избранные труды, т. 1, М., 1956, с. 166.

²⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 541:

²¹ Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 546:

²² Մ. Աբեղյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 552:

²³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 297:

Մակբայը ածականի հետ կազմում է մի ընդհանուր տեսակ, որը նա կոչում է մակադրական բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ, ածականի՝ առարկայի հատկանիշ, իսկ մակբայը՝ հատկանիշի հատկանիշ²⁴:

Մակբայներն իրենց հերթին լինում են անվանական մակբայ, քվական մակբայ, դերբայական մակբայ և դերանվանական մակբայ²⁵:

Նա խոսքի մաս չի համարում կապերն ու շաղկապները՝ դրանք անվանելով կապակցական բառեր կամ խոսքի մասնիկներ²⁶: Նշենք, որ ձևական քերականության ռուսական դպրոցում նույնպես դրանք խոսքի մաս չեն համարվում:

Ինչպես հայտնի է, ռուս իրականության մեջ ձևական քերականության նախադրյալներից մեկն էլ եղել է դպրոցում ռուսերենի դասավանդման խնդիրը:

Աբեդյանի հետազոտությունները նույնպես սերտորեն կապված էին հայոց լեզվի դասավանդման խնդրի հետ ինչպես բուհում, այնպես էլ դպրոցում: Այսինքն՝ նա նպատակ էր հետապնդում ստեղծելու նաև աշխարհաբարի տարրական քերականությունը, որը և կդասավանդվեր դպրոցում: Իհարկե, Աբեդյանը որոշակի զիջումներ է անում դպրոցական քերականությանը, քանի որ ի տարբերություն «Աշխարհաբարի քերականության», որտեղ նա, օրինակ, ընդունում է հինգ հոլովի տեսությունը, «Տարրական քերականության մեջ» վարժապետների համար մատչելի լինելու նպատակով նա ընդունում է նաև սեռականը, թեև ճիշտ է համարում հինգ հոլովի տեսությունը²⁷: Իհարկե, հետազայում «Աշխարհաբարի հոլովները» աշխատության մեջ խոսելով հոլովման ուսուցման մասին՝ նա գտնում է, որ երեխային անհրաժեշտ է հոլովել տալ, որպեսզի նա գիտակցի իր լեզվի մեջ խոսած անունների և դերանունների ձևերը և նա պետք է իմանա, որ հայոց լեզվի մեջ գոյականները հինգ ձև, այսինքն՝ հինգ հոլով ունեն: Այդ ձևերի ուսումնասիրությունն էլ ձևաբանության խնդիրն է, իսկ նրանց կիրառությունը՝ շարահյուսության²⁸:

Ի դեպ, Աբեդյանը միակը չէր, որ փորձում էր դասագրքեր և ձեռնարկներ ստեղծել աշխարհաբար հայերենի ուսուցման համար: Նրա աշակերտները նույնպես իրենց մասնակցությունն ունեցան այդ գործում: Այսպես, 1920-ական քվականներին հրատարակվեցին նաև քերականության մի շարք ձեռնարկներ,

²⁴ Մ. Աբեդյան, Երկեր, հ. 8, եր., 1985, էջ 553:

²⁵ Մ. Աբեդյան, Երկեր, հ. 6, 7-րդ լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 297:

²⁶ Մ. Աբեդյան, Երկեր, հ. 6, 7-րդ լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 298:

²⁷ Մ. Աբեդյան, Երկեր, հ. 6, 7-րդ լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 570:

²⁸ Մ. Աբեդյան, Երկեր, հ. 6, 7-րդ լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 572:

օր. 7. Պետրոսյանի «Գործնական քերականությունը», որոնք նույնպես կրում էին ձևական քերականության ազդեցությունը²⁹:

Սակայն Աբեղյանի ձևի ըմբռնումը փոքր-ինչ տարբերվում է Ֆորտունատովի ձևի ըմբռնումից: Բանն այն է, որ նա ձևին գերապատվություն է տալիս բովանդակության նկատմամբ, որն իր արտացոլումն է գտնում ձևաբանության մեջ, իսկ շարահյուսության մեջ կարևորում է գործառույթը: Ըստ այդմ ձևաբանության մեջ տարբերակում է հինգ հոլով ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական և ներգոյական, իսկ շարահյուսության մեջ՝ ութ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական և կոչական: Իհարկե այս տարբերակման հիմքում ընկած են հոլովի մասին նրա ունեցած պատկերացումները: Նա հոլովը սահմանում է այսպես.

«Ի՞նչ է հոլով ասվածը, - եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով: Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ՝ տեղի, ժամանակի, պատճառի և այլն, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի ուրիշ բառի հետ: Արդ, հոլովների մասին սովորեցնել կնշանակե երկու բան սովորեցնել. նախ՝ թե տրված բառը քանի տեսակ ձև կամ հոլով կարող է ունենալ և որոնք են այդ ձևերը, և երկրորդը՝ թե ամեն ձև կամ հոլով ինչպիսի և քանի տեսակ կախման հարաբերություն կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ. ուրիշ խոսքով՝ որոնք են այս կամ այն հոլովի գործածությունները. որովհետև ամեն հոլով միայն մի տեսակ հարաբերություն է չի ցույց տալիս, այլ մի քանի, երբեմն և շատ³⁰»:

Ինչպես տեսնում ենք, նա ընդունում է, որ միևնույն հոլովը կարող է գործածվել զանազան շարահյուսական հարաբերություններ ցույց տալու համար:

Նշենք, որ միևնույն հոլովի զանազան շարահյուսական հարաբերություններ ցույց տալու համագամանքն էլ հիմք հանդիսացավ կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչների համար տարբերակելու ընդհանրացված և վերացարկված քերականական իմաստը և նրա առանձին դրսևորումները՝ մասնավոր իմաստները, որոնք ընդհանուրի հետ գտնվում են նույն հարաբերության մեջ, ինչ հնչույթն ու հնչյունները: Օրինակ՝ է. Աղայանը սեռականն ու տրականը առանձին հոլովներ համարելով՝ հայցականի իմաստը, այն է՝

²⁹ Գմբտ. է. Աղայան, Դայ լեզվաբանության պատմություն, հ. 2, եր., 1962, էջ 53:

³⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 6, Դայոց լեզվի տեսություն, եր., 1965, էջ 571:

գործողությունը կրող առարկայի (ուղիղ խնդիր) իմաստը համարում է ուղղական հոլովի բացարձակ իմաստի շարահյուսական իրացումներից մեկը³¹:

Ինչ վերաբերում է Աբեդյանին, ապա նա որոշակի հակասության է հանգում հոլովների հարցում: Ձև ասելով նա հասկանում է ոչ թե լոկ հնչյուններն ու վերջավորությունը, այլ՝ վերջավորություն + ֆունկցիա³²: Սակայն մյուս կողմից ֆունկցիան առանձնացնում է շարահյուսության մեջ, իսկ վերջավորությունը՝ ձևաբանության: Ընդ որում, նա շարահյուսական կիրառությունը նույնացնում է հոլովական նշանակության հետ, քանի որ ընդունում է ութ հոլով ըստ նշանակության և հինգ հոլով ըստ ձևի:

Այսպես, 1908թ. հրատարակված իր «Աշխարհաբարի հոլովները» աշխատության մեջ նա գրում է.

« 1. Պետք է որոշ կերպով տարբերել իրարուց, հոլով ըստ ձևի և հոլով ըստ նշանակության կամ կիրառության միայն:

2. Սեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի (formell) միայն հինգ հոլով է գանազանում, ուստի ձևաբանության մեջ (Formenlehre) միայն հինգ հոլով պետք է դնել:

3. Ինչպես կոչականը, նույնպես և հայցականն ու սեռականը միայն ըստ նշանակության կարելի է հոլով համարել, ուստի դրանց ուսումը պետք է մտնի շարահյուսության մեջ:

Սեռական հոլովը պետք է պահել 2-րդ հոլովի իբրև անվան լրացում կամ վերադիր գործածության համար, ինչպես և հայցական տերմինը ոչ թե ձևի համար պետք է գործածել, այլ ուղղականի և տրականի հոլովական ձևերի իբրև անցողական բայերի սեռի խնդիր գործածության համար: Այսպես վարվում են արդեն մեր քերականները կոչական հոլովի համար, որ ըստ ձևի առանձին հոլով չեն դնում»³³: Իսկ «Աշխարհաբարի շարահյուսության մեջ» /1912/ Աբեդյանը ըստ նշանակության ընդունում է ուղղական, կոչական, հայցական սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովները³⁴: Հավատարիմ մնալով իր սկզբունքին՝ նա անձնական և ցուցական դերանունների սեռականն էլ համարում է ստացական ածականներ:

Ինչ վերաբերում է շարահյուսությանը, ապա Աբեդյանն այն սահմանում է հետևյալ կերպ. «Շարահյուսությունը քերականության այն մասն է, որ սովորեցնում է, թե ինչպիսի բաղադրիչ մասերից և ինչպես է կազմվում

³¹ Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 221-225:

³² Մ. Աբեդյան, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 570:

³³ Մ. Աբեդյան, Աշխարհաբարի հոլովները, Եր., 1908, էջ 83-84:

³⁴ Մ. Աբեդյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 399-469:

խոսքը կամ նախադասությունը»³⁵։ Ըստ այդմ նա շարահյուսությունը բաժանում է բառերի շարահյուսության և խոսքերի շարահյուսության։ Բառերի շարահյուսությունը սովորեցնում է բառերի պաշտոնը և կապակցությունը խոսքի մեջ, իսկ խոսքերի շարահյուսությունը՝ խոսքերի տեսակներն ու կապակցությունները³⁶։ Ընդ որում խոսք ասելով՝ նա նկատի ունի նախադասությունը։

Համեմատելով ռուս ֆորմալիստների հետ՝ տեսնում ենք, որ Ս. Աբեղյանի հայացքները լիովին չի կարելի որակել որպես ձևապաշտական։ Այսպես, խոսքի մասերի դասակարգման հարցում նա չի հետևում ֆորտունատովյան դպրոցի բառերի դասակարգմանը՝ ըստ բառափոխական ձևերի։ Աբեղյանը ձևը ելակալետ է ընդունում միայն ձևաբանության մեջ։ Բացի այդ, ձև ասելով նա նկատի չունի զուտ արտահայտության պլանը, այլ հնչյունական կողմն ու գործառույթը միասին վերցրած։ Չնայած ձևաբանության մեջ նա քննում է միայն հնչյունական կողմը։ Այս առումով թերևս նա հակասում է ինքն իրեն, քանի որ ձևաբանության մեջ այնուամենայնիվ նա գերապատվություն է տալիս հենց հնչյունական կողմին, այսինքն՝ ֆորտունատովյան ձևական պատկանելությանը։ Ֆորտունատովն ինքը ձև ասելով հասկանում է գիտակցության մեջ բառի որոշակի ձևով տրոհվելու ունակությունը³⁷։

Այնուամենայնիվ չի կարելի չնկատել, որ երբեմն նրանց հայացքները համընկնում են, ինչպես օրինակ՝ խոսքի մասերի համակարգից դերանվան, թվականի, կապի, շաղկապի բացառելուն, ինչպես նաև դերբայները տարբեր խոսքի մասերի մեջ բաշխելուն վերաբերող հարցերում։

Աբեղյանը նույնպես, ինչպես և ֆորտունատովը, դերանունները չի դասում խոսքի մասերի շարքին և դրանք համարում է գոյականների և ածականների տարատեսակներ՝ հիմք ընդունելով թերևս բառափոխության ձևաբանական ձևերը։ Ընդ որում, ի տարբերություն ֆորտունատովի, նա խոսում է նաև դերանուն մակբայների մասին։

Թվականների հարցում թերևս մի փոքր տարբերություն կա։ Բաշխելով դրանք գոյականների, ածականների և մակբայների միջև՝ Աբեղյանը ածականների հարցում շեշտում է հենց իմաստային կողմը։ Ֆորտունատովը, սակայն, թվական ածանցները որպես առանձին խոսքի մաս չի ներկայացնում, քանի որ, ըստ նրա, ընդհանուր հնդեվրոպական լեզվում դրանք բառի ոչ մի ձև իրենց մեջ չեն պարունակել և չնայած այն բանին, որ որոշ թվականներ

³⁵ Ս. Աբեղյան, Երկեր, հ. 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 292։

³⁶ Ս. Աբեղյան, Երկեր, հ. 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 453։

³⁷ Фортунатов Ф. Ф., Избранные труды, т. 1, М., 1956, с. 136.

հոլովվել են, այնուամենայնիվ բոլորը միասին չեն կազմել բառերի որևէ հատուկ քերականական դաս³⁸/= խոսքի մաս/ :

Ինչ վերաբերում է մակբայներին, ապա Աբեղյանը, ի տարբերություն Ֆորտունատովի, դրանք չի փորձում դասակարգել ըստ քերականական և ոչ քերականական խմբերի կարևորելով տվյալ բառի մեջ ոչ թե բառափոխական ձևերի առկայությունը, այլ խոսքամասային իմաստը, այն է հատկանիշի հատկանիշի հասկացությունը:

Շարահյուսության հարցում Մ. Աբեղյանը նույնպես բավականին հեռու է Ֆորտունատովի ըմբռնումներից, քանի որ որպես շարահյուսության ուսումնասիրության առարկա է դիտում խոսքը՝ այն է՝ նախադասությունը և ոչ թե բառակապակցությունը՝ հասնելով մեկ այլ ժայռահեղության և չխոսելով բառակապակցության մասին ընդհանրապես: Շարահյուսության խնդիրը համարելով ինչպես բառերի, այնպես էլ խոսքերի կապակցման եղանակների ուսումնասիրությունը՝ Աբեղյանը քննում է աշխարհաբար հայերենի պարզ և բարդ նախադասությունները, նրանց տեսակները, անգամ պարբերությքը դառնալով այսպիսով տեքստի լեզվաբանության նախակարապետը հայ լեզվաբանության մեջ:

Այսպիսով, ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ հայ լեզվաբանության մեջ ծնական քերականության ազդեցությունը մասամբ կրել է Մ. Աբեղյանը, սակայն ակնհայտ է, որ շատ հարցերում նա շեղվել է Ֆորտունատովյան դպրոցի սկզբունքներից՝ հաճախ հավասարապես կարևորելով լեզվական միավորի թե գործառույթը և թե իմաստը:

³⁸ Фортунатов Ф. Ф., Избранные труды, т. 1, М., 1956, с. 165-166.